

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ՀԱՅ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒՂՈՒՄ (1850—1870 թթ.)

Հ. Ա. ԱՄՄԱՐՅԱՆ

Իտալական ազգային-ազատագրական շարժումների մասին գրել են «Հյուսիսափայլը», «Մեղուն», «Արևելյան մամուլը», «Ծաղիկը», «Հայկական աշխարհը», «Մեղու Հայաստանին», «Լերշալույս Արարատյանը», «Մշակը», «Արձագանքը», «Փորձը», «Արևմուտքը», «Մասյաց աղավնին», «Եղբայրասիրը», «Եվրոպան», «Բազմավեպը», «Հյուսիսը», «Փարիզը» և այլ հանդեսներ ու լրագրեր:

Կ. Պոլսում տպագրվող «Հայաստան» լրագիրը, թերևս, առաջինն էր, որ 1848 թ. գրեց իտալական ազգային-ազատագրական շարժումների մասին: Լրագրի համարներից մեկը նվիրվում է Իտալիայում ծավալված հեղափոխական դեպքերին: Այնտեղ պատմվում է, թե ինչպես «Կառիսյալտի Սադունիայի ձևերը», որ գործում է թագավորից անկախ, իր զորքերով Լակո Մաչիոբելից հասել է Կոմո և շարունակել իր ուղին մինչև Շվեյցարիայի Ցիլինո գավառը: Այնուհետև Զուգելպուլե Գարիբալդին իր ղեկավարությամբ հասավ Լոմբարդիա և հասարակապետության գլուխ կանգնած Մաձձինիի հետ համատեղ «ազատության ծառը տնկեց»: Դեռ ավելին. Կսուլոս Ալբերտ թագավորի դեմ էլ «նախատական հայտարարություն մը հանեց»¹:

«Հայաստան» լրագիրը Կ. Պոլսի պատրիարքարանի օրգանն էր և նրան չպետք է դուր գար Գարիբալդիի այս արմատականությունը: Ահա թե ինչու թերթում տպագրված թղթակցությունից պարզվում է, որ լրագիրը վախեցած է Մաձձինիի հասարակապետական ուսմունքից:

Նոսելիով Լոմբարդիայում տեղի ունեցող ապստամբության մասին, «Հայաստան» լրագիրը նորից անդրադառնում է Զուգելպուլե Մաձձինիի գործունեությանը. «Եվ ասոնց գլխավոր խրատ տվողն է Մաձձինի, որ իր հայրենյացը այնքան վնասու պատճառ եղավ»²: Այս դեպքում բացահայտորեն երևում է թղթակցի բացասական գիրքը Մաձձինիի հանրապետական հայացքների նրկասմամբ:

Իտալական ազգային-ազատագրական շարժումների մասին նյութեր են տպագրվում նաև «Բանասերում»: Այստեղ նախ քան ընթերցողներին տեղեկություններ են տրվում Իտալիայի աշխարհագրական պայմանների, դիրքի մասին: Պարբերականը նշում էր, թե «Իրավամբ պետք է ճանչընալ Իտալիան իբրև նախապատճառ աս կես դարուս վերջի տարիներուն գործոցը»³:

1851 թ. փետրվարին «Բանասերը» հաղորդում էր, որ Իտալիայում արդեն խաղաղություն է և «որով այս երկիրը կը ջանա անցյալ տարիներումս իր կրած»

¹ «Հայաստան» լրագիր, Կ. Պոլիս, 18 սեպտեմբերի, 1848:

² Նույն տեղում, 4 դեկտեմբերի 1848:

³ «Բանասեր», Կոստանդնուպոլիս, 1851, № 1, էջ 46:

վնասներուն դարման ընել»⁴։ Սարգիսիան է միայն, որ «ազնիւի աղատական ճամբուն մէջ մտած է, ու հաստատուն կերպով մը առաջ կերթա, միշտ նկեղեցակահաց ու իրեն հակառակ կողման նույն ընդդիմութիւնը կը բանեցնէ, անոնց հեղափոխական մտքերը զսպելով (ընդգծումը մերն է—Հ. Ա.), որոնք թագավորին հրաժարումը և հին վիճակի նորոգութիւնը կերազեն։ և աս խնդիրը չի գիտցընիր ինչ վախճան պիտի ունենա»⁵։ «Բանասերի» թղթակցի գրածից պարզվում է, որ նա դեմ է հեղափոխութեանը և տարակուսանք է հայտնում այն մասին, թե վերջապէս այս ամենը «ինչ վախճան պիտի ունենա»։ «Բանասեր» հանդեսի խմբագիր Հովհաննէս Հիսարյանը հարում էր իտալական աղատագրական շարժման իբրեւոյլ բուրժուական թեին։ Նրա ցանկութիւնն էր իտալական հարցի լուծումը տեսնել «կարգավորված» և խաղաղ վիճակում, առանց բարդութիւնների և հեղափոխական ցնցումների։

«Մասիս» լրագիրը նույնպէս շատ նյութեր է տպագրել իտալական դեպքերի մասին, բայց դրանք մեծ մասամբ արտատպութիւններ են արտասահմանյան լրագրերից։

1855 թ. «Մասիսը» գրում էր. «Անուանի Մածծինի խռովարարին զրգռիչ գրվածներովը և ամեն կողմ ունեցած լրտեսներուն զաղտնի ջանքերովը՝ Իտալիո ժողովրդոց մէջ խորին հուզմունք մը կա կրսնէ։ Այս պատճառով է, որ Ավստրիո տերութիւնը կոմպարտիայի և մանավանդ Հռոմի երկիրներուն մէջ ունեցած գորքերը շատցընելու ետեւ է, և արդեն խրկած գորքերուն թիվը 50 000 կը հասցնեն»⁶։

Ինչպէս հայտնի է, 1859—1860-ական թթ. իտալական ազգային-ազատագրական շարժումները գնալով լայն թափ ստացան։ Հեղափոխական իրադրութիւնը ամբողջապէս հասունացել էր Ապենինյան թերակղզում։ Ժողովրդական զանգվածները ոտքի էին կանգնել օտար լուծր թոթափելու և երկիրը միավորելու համար։ Այժմ արդեն «Մասիսը» հաղորդումներ էր տպագրում, որոնցում նշվում էր, թե «հեղափոխութիւնը վերջապէս տապալելց դեմը ելած բոլոր արեւելքները և Իտալիո թերակղզվուն տիրապետեց»⁷։ «Մասիսը», սակայն, մեծ մասամբ դեպքերի սոսկ արձանագրողն էր։

Իտալական ազգային-ազատագրական շարժումների սուրժով լրագրում տպագրվեց հունգարացի նշանավոր քաղաքական գործիչ, ազգային-ազատագրական շարժման ղեկավար Լայոշ Կոշուտի համակը՝ ուղղված Գլադստ քաղաքում բնակվող Մ. Ադամսին։ Կոշուտը աշխատում էր իբր այս համակով շահել Անգլիայի և Շոտլանդիայի բնակչության համակրանքը, կարծելով, որ հասնել է ժամը՝ սկսելու հունգարների և իտալացիների համատեղ գործողութիւններն ընդհանուր թշնամու՝ Ավստրիայի դեմ։ Նա գրում էր. «Իտալացի քաղաքագետները լավ մտածելու են որ Իտալիո համար՝ ոչ միայն համակրութեան և եղբայրական բարեկամութեան՝ այլև կենսական շահու նյութ մըն է Հունգարիայի պարծակցութիւնը չկորսնցունելու ջանալը»⁸։

Քաղաքագետները, Կոշուտի կարծիքով, պետք է վստահ լինեն, որ Հունգարիան էլ ձգտում է Իտալիայի առաջադիմութեանը։ Եվ երկու կողմերը արագ

⁴ Նույն տեղում, N 2, էջ 105։

⁵ Սույն տեղում։

⁶ «Մասիս», Կ. Պոլիս, 28 հուլիսի 1855։

⁷ Նույն տեղում, 22 սեպտեմբերի 1860։

⁸ Նույն տեղում, 1 նոյեմբերի 1861։

գործելով պետք է հնարավորություն շտան Ավստրիային՝ կաշկանդելու Հռոմ-գարիային, քանի որ դրա հետևանքը անշուի ծանր կլինի Իտալիայի սուպրապի համար: Իտալիան նեապոլից հետո պետք է ձգտի միավորել Հռոմը և Վենետիկը: Այժմ Իտալիան ի վիճակի չէ պատերազմել միմիայն իր ուժով և հաղթել Ավստրիային: Ինչո՞ւ դեպքերի ընթացքը շարագացնել և շամբապնդել Իտալա-հունգարական համագործակցությունը: Խոսելով այդ կարևոր խնդրի մասին, Կոշուտը գրում էր. «Նաբոլին ու Հռոմը չեն կրնար Վենետիկը Իտալիո տալ թե որ Հունգարիա կորսվի: Բայց թե որ միևնույն ժամանակի մեջ երկու պատերազմ վաստակվի՝ մեկը Իտալիո մեջ և մյուսը Դանուբի վրա, Վենետիկի, Նաբոլիի և Հռոմի խնդիրները մեկն կը լուծվին: Դանուբի վրա կըսեմ, որովհետև անտարակույս գիտեմ որ Իտալական խնդիրն իր վերջին լուծումը Դանուբի վրա կընա ստանալ և ոչ Իտալիո մեջ»⁹: Անշուշտ, Կոշուտի այս ծրագիրը շատ մեծ կաբե-վորություն ուներ: Փաստորեն, Իտալիային եղբայրական օգնության ձեռք էր մեկնելու Հունգարիան: Ավստրիայի դեմ տեղի էր ունենալու երկու պատերազմ, մեկը՝ Իտալիայում, մյուսը՝ Հունգարիայում, Դանուբի վրա: Ահա այս միաժա-մանակյա պատերազմները կշլատեն Ավստրիայի ուժերը, և վերջինս երկու ճակատներում հավասարապես չէր կարողանա նրանց դիմադրել: Ի վերջո, Ավստրիական բազմազգ միասնությունը կտապալվեր և այս ճանապարհով նախ կլուծվեր Իտալիայի միավորման հարցը, իսկ հետո էլ Հունգարիան կըս-տանար իր անկախությունը: Կոշուտի այս ծրագիրը, սակայն, չիրագործվեց քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով:

«Արշալույս Արարատյանը» շատ նյութեր է նվիրել Սվրոպայի քաղաքական վիճակին և մասնավորապես Իտալիային¹⁰, Թերթի խմբագիր Ղ. Պալզազարյանը հոգվածներ է տպագրել նաև Ջուզեպպե Դարիբալդիի հերոսական գործու-նեություն մասին: «Մեծահամբավ Կարիպալտի քաջ և իմաստուն գործապետը», «...այս մեծ զորապետը հաղթությունն է հաղթություն առաջանալով, այսօրվան օրս Նաբոլիի մայրաքաղաքը հասած ու անոր տիրած է շուտով», «Իտալիո ազատության առաջնորդը» և այլն: Բայց նա կարծում է, որ «այս կերպիվ կոի-վը Իտալիո սահմաններն դուրս պիտի տարածվի և ընդհանուր պատերազմ մը պիտի ըլլա»¹¹: Այնուհետև Ղ. Պալզազարյանը շարունակում է զարգացնել իր մտքերը. «Բայց Իտալական խնդիրը այսպես պարզ չէ և կրնա վտանգավոր հե-տևություններ ունենալ՝ ի մասին ընդհանուր խաղաղության՝ քանի որ Սվրոպիո մեծ տեբությունները համաձայն չեն մեջերսին»¹²: Պալզազարյանը լիբերալ գոր-ծիչ էր և իր խմբագրած լրագրում իտալական դեպքերը լուսաբանում էր իր տե-սանկյունից: Նրա ցանկությունն այն էր, որ Իտալիայում հաստատվի Վիկտոր-Լամանվել II-ի սահմանադրական միապետությունը: Եվ այստեղից էլ նրա մոտ ծնվում է համակրանքը Սարդինիայի պրեմիեր կոմս Կավուրի նկատմամբ և վախճ՝ հասարակապետություն ու Մաձձինիի զաղափայլների հանդեպ: «Արշա-լույս Արարատյանը» իր համարներից մեկում գրում էր. «Գաղղիան պաշտոնա-կան կերպով ճանշըցավ և ընդունեցավ զՎիքթոր Լամանվել թագավորը իբրև վեհապետ Իտալիո թագավորության»: Նրա դրածից ստացվում է, որ Վիկտոր-

⁹ Նույն տեղում:

¹⁰ Տե՛ս «Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 23 հոմվարի 1859:

¹¹ Նույն տեղում, 1 մայիսի 1859:

¹² Նույն տեղում, 2 հոկտեմբերի 1859:

էմմանվելը մեծ ջանքեր է թափել այդ ուղղությամբ, և դործը պսակվել է հաջողությամբ: Սակայն դա այդպես չէր:

1860 թ. օգոստոսի սկզբներին սկսվեց Գարիբալդիի նշանավոր «Հազարյակի» հայտնի արշավանքը: Կարմրաշապկավորները Կալաբրիայից շարժվեցին դեպի Նեապոլ: Զուգակապես Գարիբալդին իր «Հազարյակով» գրսվեց Երկու Սիցիլիաների թագավորության մայրաքաղաքը, որտեղից Ֆրանցիսկ II-ը փախավ: «Արշալույս Արարատյանի» մի ուրիշ համարի հաղորդման մեջ խոսք կա այն մասին, թե ինչպես են ժամանակի կղերական լրագրերը ցասումով դատապարտում իտալական հեղափոխական դեպքերը: «Հիվանդ Իտալիան դիվահար է մը պես իբ տենդին մեջ ընկնիքը չգիտեր. կը փրփրաւ. ինքզինքը ասդին անդին կը դարնէ ու միշտ խորսակէնլու մոտ կերթաւ. բերանը միութիւն, բայց գործը քալելու է: Դեռ մէկ երկու շէն. լեզեովն է, որոնցմէ Աստված միայն կարող է ազատել իր եկեղեցին ու անոր պաշտոնյաները որոնց դեմ է զըլխավոր պատերազմը, բայց ցավալին ան է, որ իր որդիքը իրեն դեմ զինած են, ինչպես կըսէ ու կուլա անոր երեւելի գլուխը...»¹³:

«Արշալույս Արարատյանը» ուրախութիւնով է արձանագրում այն փաստը, որ Ապենինյան թերակղզին 1860 թ. նշանավոր իրադարձություններից հետո էլ, բացի Հռոմի փոքրիկ նահանգից և Վենետիկից, սմբողջովին գտնվում է Սարդինիայի թագավորի ձեռքում: Հողվածագիրը փաստում է, որ ժամանակի քաղաքական տարբեր հարցերի շուրջը Սարդինիայի կառավարության նախագահ Կավուրի և Գարիբալդիի միջև տարաձայնություն է առաջ եկել: «Այս տարաձայնությունը ցավալի և վստահավոր է անշուշտ այժմյան պարագայից մեջ. բայց կը հուսացվի թէ Վիքթոր-էմմանվել թագավորին անձնական ազդեցութեամբ խաղաղությունը շուտով պիտի հաստատվի այս երկու հռչակավոր մեծանուն անձանց մեջ, որոնք Իտալիո ազգային շարժումին և ազգային ազատության հոգին են. և որոց մեկուն կենցաղագիտական տաղանդին (հեղինակը նկատի ունի Կավուրին—Հ. Ա.) և մյուսովուն (Գարիբալդի—Հ. Ա.) դիմորական քաջութեանը վրա կը սքանչանա եվրոպան»¹⁴:

Ստեփանոս Նազարյանցը «Հյուսիսափայլում» մեծ տեղ է տվել իտալական ազգային-ազատագրական շարժումներին: Այսպէս, «Հյուսիսափայլի» համարներից մեկում նրա թարգմանությամբ տպագրվում է Ռիսորջիմենտոյի մեծ բանաստեղծ Ալֆրեդիի «Փիլիպպոս Երկրորդ, թագավոր Սպանիայի» ողբերգական դրաման¹⁵, որը նվիրված է Իսպանիայի ազատության և միասնության համար մարտնչող Փիլիպպոս II-ին և նրա ընտանիքին: Դրամայի հիմնական գաղափարը այն է, որ երկրի միասնության հարցը չի լուծվի, եթե համերաշխություն չլինի, ինչպես ներսում՝ ընտանիքում, այնպես էլ դրսում:

«Հյուսիսափայլին» ուղղած իր նամակում Ռուբին Զալալյանցը գրում է, թե «Սովրեմեննիկ» ամսագրում կարդացել է Ե. Կարնովիչի «Գարիբալդիի կյանքը» վերնագրով հետաքրքրական վարքագրությունը և ցանկություն է հայտնում այն թարգմանված տեսնել հայերեն լեզվով: Խմբագրությունը ընդառաջում է: «Հյուսիսափայլի» շորս համարներում տպագրվում է այդ ակնարկաշարը, որի թարգմանիչ Մարտիրոս Հրաչյան ինքը՝ Ստեփանոս Նազարյանցն

¹³ Նույն տեղում, 3 սեպտեմբերի 1860:

¹⁴ Նույն տեղում, 1 հոկտեմբերի 1860:

¹⁵ Տե՛ս «Հյուսիսափայլ», 1859, N 7:

է: Գարիբալդիի մասին ակնարկաշարում առկա է. «Ահա Գարիբալդու խոռ-վալից և աշխատասեր կյանքը: Մի հրաշալի կախարչող ղորություն ունեցել է նա բոլոր Իտալիայի մեջ: Գարիբալդին կլինի նյութ քաջադնական երգերի, ազգային տաղերի, քաջագործական զորույցների և շափաղանց հրաշատառում ավանդությունների: Այժմ իսկ Իտալիայում դուրս են եկել շատ գործույկներ, որոնց մեջ Գարիբալդին հանդիսանում է իբրև մի գերբնական մարդ, մի տեսակ կարող ոգի Իտալիայի»¹⁶:

Կավուրի մահվան կապակցությամբ գրած մահախոսականում Ստ. Նաղարյանը փառաբանում է նրա դերը Իտալիայի պատմության մեջ: Ստ. Նաղարյանը, ինչպես և իր նախորդները, կարծում էր, որ Կավուրի մահը ծանր է նստելու Իտալիային: «Մացինիական բաժինը, այս անեծքը յուր հայրենի աշխարհի, այժմ վերստին կը բարձրացնե՛ր զլուխը, երբ որ վերացել էր այն գորավոր ձեռը, որ սանձահարում էր դորան, և Իտալիան յուր բաղդի ամեն մի վճռողական րուպեի մեջ կրկին և դարձյալ տեսանելու է կորուստներ»¹⁷:

«Հյուսիսաիտալիայում» Կեորգ Բարխուդարյանցի թարգմանությամբ լույս է տեսնում «Հայացք դեպի ՚ի աղատ Իտալիա. Ադոլֆ Շտաարի օրագրութունից» նյութը: Ադոլֆ Շտաարը ճանապարհորդում է ողջ Իտալիայով մեկ և նկարագրում Գարիբալդիի 1859 թ. արշավանքների ժամանակ ամբողջ Իտալիայում ծավալված ժողովրդական շարժումը և հայրենասիրական խանդավառությունը:

«Փարիզ» լրագրում տպագրված մահախոսականում խաշատուր Միսաբյանը, իրիստ բարձր գնահատելով Կավուրին և վերջինիս կատարածը Իտալիայի միավորման գործում, նրան դնում է ժամանակի մեծ մտածողների կողքին¹⁸: Իհարկե, սա շափաղանցություն է, որի հետ չի կարելի համաձայնվել:

1863-ին Կալկաթայի «Եղբայրասեր» լրագիրը ղրվատանքով էր խոսում Գարիբալդիի գործունեության մասին: «Կարիպալտի երևելի գորավար և ազատարարն Իտալիո...», — գրում էր թերթի խմբագիր Եղիազար Տեր-Հարությունյանը¹⁹: Չնայած դրան նա, մյուս լիբերալ գործիչների նման, վախենում էր, որ այդ ազատագրական շարժումները գնալով էլ ավելի կծավալեն և դուրս կգան Իտալիայի սահմաններից:

«Մեղու Հայաստանին» նույնպես նկարագրում էր Իտալիայում կատարվող դեպքերը: Հայ ազգային-պաշտպանողական ուղղության օրգանը կարծում էր, որ հետագա բարդություններից խուսափելու համար Իտալիային անհրաժեշտ է ուժեղ միապետական իշխանություն, որը հեռու կպահեր իտալացիներին հեղափոխությունից:

«Մասյաց աղավնիում», «Ընդհանուր տեսություն քաղաքական անցից» բաժնում Գյուրիել Այվազովսկին նյութի էր տպագրում իտալական խնդրի վերաբերյալ: Այվազովսկու գրածից երևում է, որ նա դեմ չէ Իտալիայի միավորմանը, բայց միայն Սարդինիայի թագավորական ուժեղ իշխանության օգնությամբ: Նա կողմնակից էր սահմանադրական միապետությանը Իտալիայում: Այվազովսկին գրում էր. «Միայն Սարտենիան 1848-են վերջը սահմանադրական կառավարություն հաստատելովը ազատ մնաց Ավստրիո ազդե-

¹⁶ Նույն տեղում, 1861, № 8, էջ 124:

¹⁷ Նույն տեղում, 1861, № 6, էջ 502:

¹⁸ Տե՛ս «Փարիզ», Փարիզ, 1861, №№ 48, 49 և 50:

¹⁹ «Եղբայրասեր», տասնօրյա լրագիր, Կալկաթա, 1863, № 36, էջ 304:

ցությունեն, և այն ժամանակէն Ավստրիո դեմ միշտ թշնամություն կցուցը-
ներ և պատերազմի կպատրաստվեր: Ասով Սարտենիան գրեթե բոլոր իտալա-
ցի ազգասիրաց սիրտը գրավեց, բաց ի Մաժժինիի հետևողներեն, որոց միտքը
այս է որ Իտալիո ամեն կողմը ազատ հասարակապետություններ հաստատեն»²⁰:
Նա բացասական կերպով էր տրամադրված Մաժժինիի և նրա հետևորդների
գործի նկատմամբ: Այվազովսկին որոշ դեպքերում արդարացնում էր Ավս-
տրիայի գերիշխող դիրքը Իտալիայի նկատմամբ և դեմ էր Իտալիայում «ա-
զատ հասարակապետություն» հաստատելուն: Նրա կարծիքով Գարիբալդին
Վիկտոր-էմմանվելի և Կապուրի խոստումներից խաբվելով մտավ թագավո-
րական բանակ և կոչում էր ոչ թե Իտալիայի միավորման, այլ իր անձնական
փառքի համար:

«Մասյաց աղավնիի» մեկնաբանը ոգևորված էր այն բանի կապակցու-
թյամբ, որ անգլիական պառլամենտում իտալական խնդրի վերաբերյալ հան-
դես է եկել լուրջ Պալմերստոնը և զովասանքի ձառ յարտասանել իտալացիներին
օգտին²¹: Իսկ ինչպես դեպքերի զարգացման ընթացքը ցույց տվեց, Անգլիան
ոչնչով չօգնեց Իտալիային: Նույն Պալմերստոնի դեմքը պարզորոշ բացա-
հայտվում է հենց «Մասյաց աղավնիում» սուպերված մի ուրիշ՝ «Եվրոպա-
կան Տաճկաստան և Կարիպալտի» վերնագրով հոդվածում: Պարզվում է, որ
Գարիբալդին աշխատել է Եվրոպայում ապրող սլավոնական ազգերին «ոտքի
հանել», բայց այս դեպքում ևս Գարիբալդին մեծ դժվարությունների առաջ էր
կանգնելու, որովհետև Անգլիան նավատորմ էր ուղարկել Իտալիայի ծովերը,
իսկ նույն Պալմերստոնը հայտարարում էր. «Կարիպալտին Հոռմի վրա քալած
ժամանակը Դադլիո հետ գործ պիտի ունենա. իսկ եթե ուղե Տաճկաստանի ու
Ավստրիո սլավյանները ոտք հանել—Անգլիո հետ»²²:

«Մասյաց աղավնին» լուրեր է տպագրում, թե Հոռմի տերությունում և
Ենեպոլի գավառի մեջ հեղափոխության հետևանքով ավաղակությունները
գնալով շատացել են²³: Հեղափոխության նկատմամբ հանդեսը մեծ վախ ունեւր:

«Մասյաց աղավնին» անդրադառնում էր Ռիսորջիմենտոյի ժամանակա-
շրջանի մեծ կոմպոզիտոր Ջուզեպպե Վերդիի (1813—1901) գործերին: Հան-
դեսի «Փարիզյան սուրհանդակ» բաժնում Հրահատը բարձր էր գնահատում մեծ
կոմպոզիտորի ստեղծագործությունները, որոնք հանդիսացել են իտալական
հեղափոխության հիմնը: «Չեմք սխալիր,— գրում է Հրահատը,— եթե ըսեմք
որ Վերդիի բոլոր թատերանվագները մեկտեղ իտալացվոց պատերազմի Մար-
սելիեզն է»: «Պիտի ունենա» արդյոք և Հայաստան յուր շարժիչ ու ցնցիչ եր-
գահարդարը, որ զինքն արթնցրնե ու վեր ցատքեցնե... թե արդյոք միշտ և
հանապազ թիւն տակեն «ամա՛ն, ամա՛ն, օ՛հ, ամա՛ն» հեծելով պիտի քնա-
սա մինչ ամենքը արթնցած են...»²⁴: Հոգվածագիրը ցավ է հայտնում, որ
ժամանակի հայ երաժշտությունը չունի այն ոգին, ինչ Վերդիի երաժշտու-
թյունը:

1863-ին Վիեննայի Միսիթարյանների հրատարակած «Եվրոպա» հանդեսը
տպագրում էր «Իտալիայի համառոտ պատմությունից» ընդարձակ հոդվածա-

20 «Մասյաց աղավնի», Թեոդոսիա, 1 հունվարի 1860, էջ 17—18:

21 Նույն տեղում, 1 փետրվարի 1861:

22 Նույն տեղում, 1 օգոստոսի 1862, էջ 178:

23 Տե՛ս նույն տեղում, 15 մայիսի 1863:

24 Նույն տեղում, 15 հուլիսի 1863, էջ 224:

շարը, ուր անդրադառնում էր և իտալական ազգային-ազատագրական շարժումներին: Հոգվածագիրը վախեցած էր այն բանից, որ «գլխավորապես հայտնի կը ցուցնենք ընկերությունը՝ (խոսքը Մաձձինիի ստեղծած «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության մասին է—Հ. Ա.) որ պետք է բոլոր Իտալիա մի միայն հասարակապետությունը բլլալ, ազնվականաց առավելությունները ճնշվիլ ու ընդհանուր ժողովրդյան կամքն ու բաղձանքն ամեն բանեն վեր սեպվիլ»²⁵:

Գարիբեի Պատկանյանը «Հյուսիս» լրագրում տպագրած «Հայոց ազգի նպատակը ի՞նչ է» հոդվածում²⁶ հիշատակում է Գարիբալդիին: Կար ժամանակ, երբ Գարիբալդին ապրում էր աշխարհիս երեսին «յուր անձին համար» և ալդ ընթացքում ուներ միայն իր անձնական նեղ նպատակը, իսկ հետո «նորա նպատակը դառավ ազգի նպատակը, և ազգային նպատակ դառավ նորա անձնական նպատակը»:

Հ. Պ. Տերոյենց-Չամուռնյանը, դեմ լինելով ամեն մի հեղափոխության, այդ թվում և 1848—1849 թթ. իտալական հեղափոխությանը, 1864 թ. գրում էր. «Այն ատենը Իտալիայի վիճակը ինչ էր նե՝ հիմա ալ նույնն է, և մեր անխորհուրդ երիտասարդներն ալ՝ գուցե իրենց չգիտնալով, մեր ազգը անոր նմանցընելու ճամբա բռնած են. անոր համար հիմա այն հոգվածը՝ (համա-նուն թեմայով դրանից առաջ տպագրված մի հոդվածում—Հ. Ա.) մեզի նկատմամբ, ավելի կարեւորություն ունի»²⁷: Շարունակելով իր միտքը Գարիբալդիի և գարիբալդիականների մասին, նա գրում էր. «Հետագա լուրը որ գաղղիական յունիոն լրագիրը կուտա և կարդալով մեզի սոսկում եկավ որ քրիստոնյա տե-րություն մը յուր երկրին մեջ ալն աստիճանի թուլւթւթյուն կընե մի եղեր: Բայց ետքը մտածելով որ Կարիպալտիի հետեւողներուն գործն է և ինքը Կարիպալտի շատ օտար չէ ասկեց, ուզեցինք մեր ընթերցողացը հաղորդել. որոնք կրնա բլլալ որ Կարիպալտի և կարիպալտյանները շատ աղեկ մարդիկ չըլլալ-նին իմացած ըլլան՝ իրենց վրա իշխանություն ունեցող թագավորին անհնա-ղանդ գտնվել են, և անոր դեմ կռիվ ելել են, բայց այս աստիճանի հասած ոլլալնին չգիտնան»²⁸:

Միապետական, հետագեմ Տերոյենցը դեմ էր ամեն մի ապստամբական գործողության, ուր էլ որ այն ծավալելու լինէր՝ Իտալիայում, թե Հայաստա-նում: Այդ պատճառով էլ նա Գարիբալդիին և գարիբալդիականներին չէր հան-դուրժում:

* * *

Հայ հեղափոխական դեմոկրատ Միրայել Նալբանդյանը ականատես եղալ իտալական ազգային-ազատագրական շարժման դեպքերին և նրանց ազդե-ցությամբ էլ 1859-ին դրեց «Իտալացի աղջկա երգը», որը տպագրեց «Հյուսի-սահայլում» Գոմս էմմանվել ստորագրությամբ: Այդ բանաստեղծության մեջ Նալբանդյանը իտալացի աղջկա օրինակով ոգեշնչում էր հայ ժողովրդին.

25 «Եվրոպա», Վիեննա, 1863, հատ. 2, № 21, էջ 164:

26 Տե՛ս «Հյուսիս», Ս. Պետերբուրգ, 1864, № 23:

27 «Երևակ», Կոստանդնուպոլիս, 1864, № 10, էջ 73:

28 Նույն տեղում, № 14, էջ 108:

Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կասկապած,
Յուր բաջ որդոց սուրբ արյունով
Պիտի լինի աղատված²⁹:

Բանաստեղծության վերջին մասում Նալբանդյանը հիշում էր հայոց V դարը-

Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է
Տեսանկողով այսպես սեր
Դեպի թշվառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:
Սորա կեսը, կեսի կեսը,
Գեթ երևեր մեր աղբում:
Բայց մեր կանայք... ո՛ր Նղիշե,
Ո՛ր մեր տիկնայք փափկասուն³⁰:

Մ. Նալբանդյանը Իտալիայում էր գտնվում 1860 թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1861 թ. հունվարի 11-ը: Նա շատ կարճ ժամանակ մնաց այնտեղ, բայց այդ ընթացքում հասցրեց այցելել իտալական քաղաքներից Մեսսինա, Նևապոլ, Ջենովա, Թուրին, Հռոմ և այլուր:

1860 թ. դեկտեմբերի 30-ին Նալբանդյանը Իտալիայից նամակ է գրում Հարություն Սըվաճյանին: Նամակից երևում է, որ հայ հեղափոխական դեմոկրատը, ուստի հեղափոխական դեմոկրատներ Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Օգարյովի, Սեյնո-Սոլովևիչի նման ոգևորված էր իտալական բուրժուական հեղափոխությամբ: Նալբանդյանը գրում էր. «Մյուս կը շթողեց ինձ ուղղակի նավել դեպի Մարսել՝ հարկադրվեցա ոտք կոխել Սիկիլիա կղզին: Երբ մեր շոգենավը մոտեցավ ծովերին, Մեսսինայի նավահանգստում կանգնած էր մի ահագին բաղնիքային աշխույժ երիտասարդների, որոնց կարմիր շապիկը վկայում էր, թե պատկանում են իտալական Հերոսին՝ Գառիբալդիի բանակին: Այդ վառվռուն երիտասարդների դեմքի վերա գծագրված էր ուրախություն և խղճի հանգստություն. նոցա ճակատը փայլում էր արժանավոր պարծանքով:

«Կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Գառիբալդի» անլուռ աղաղակում է հասարակ ժողովուրդը. կեցցե՛ Իտալիա, կեցցե՛ Վիկտոր Էմմանվել, գոչում են քաղաքացիք, այսինքն միջնակարգ ժողովուրդը: Այս ուրախական բացականչությունքը, թեպետև հառաջանում են տարբեր սկզբունքներից, վերաբերությանմբ դեպ ի Գառիբալդի և դեպ ի Վիկտոր Էմմանվելը, բայց «Իտալիան» ամոքում է այս խոշոր տարբերությունը և այս պատճառով ևս հիշյալ երկու կացությունքը պործ տեսան և ամոթահար հաղթահարեցին ազնվական կացությունը, որ հերիքանալով անձնական դյուրությունմբ, նեապոլիտանյան նեղսիրտ ասպոլյուտիզմի ժամանակ, եթե չկարողացավ դեմ դնել ազգի միջից դուրս արձակված դիմագրավ դորություն, գեթ մեծ տհաճությամբ լսեց և լսում է անլուռի «կեցցեները»³¹:

²⁹ «Հյուսիսափայլ», 1861, № 11, էջ 400:

³⁰ Նույն տեղում, էջ 402:

³¹ «Մեղու», 9 սեպտեմբերի 1871: Տե՛ս նույնը՝ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, Երևան, 1949, էջ 83:

Նալբանդյանի համակրանքը իտալական ազատագրական շարժման ղեկավարներից Գարիբալդիի և «հասարակ ժողովրդի» կողմն էր։ Նամակի վերջում Նալբանդյանի աչքի առջև է գալիս նորից հայ ժողովրդի ճակատագիրը. «էտնան և Վեղուվին ծխվում են. Արարատի հին վուլկանի մեջ միթե՞ կրակ կմնա իսպառ... մահաբեր մտածություն»³²։

Հայտնի է նաև Սերովբե Թագվորյանի նամակը ուղղված Միքայել Նալբանդյանին (մայիս 14/26, 1862, Կ. Պոլիս), ուր խոսվում է պարոն Մարտիրոսի (Մաձձինիի) և «աղքատ և հիվանդ եղբայր (իմա՝ Հայաստանին—Հ. Ա.) օժանդակելու» մասին³³։ Նամակի բովանդակությունից երևում է, որ Մ. Նալբանդյանը աշխատել է կապեր հաստատել իտալական ազգային-ազատագրական շարժման հեղափոխական թևի մյուս ղեկավարների՝ Մաձձինիի, Գարիբալդիի և ուրիշներին հետ։

Միքայել Նալբանդյանը ցանկանում էր հայ առաջադեմ մտավորականներին՝ Հ. Սրվաճյանին, Ս. Թագվորյանին, Հ. Քյաթիսյանին և ուրիշներին հաղորդակից դարձնել ոչ միայն ռուս հեղափոխական-դեմոկրատական մըտքին, այլև իտալական ազգային-ազատագրական շարժումներին։

«Մեղու» պարբերականում Հ. Սրվաճյանը Գարիբալդիին նվիրված երկու նյութ է տպագրել՝ «Կարիպալտի» հոդվածը և «Մասիսից» արտատպած «Կարիպալտի ղորավարին նամակը Պալերմոյի համալսարանին աշակերտացը»։ Սրվաճյանը ցանկանում էր «նոր ժամանակի դյուցազնի»՝ Գարիբալդիի և իտալական ազգային-ազատագրական շարժման օրինակով «նոր սերունդին սիրտն էլ թնդացնել» հայրենիքի ազատության համար։

«Այս անձը,— գրում էր նա,— առաջյալն Աստուծո, կուգա մարդկության բարերար ըլլալու և գերի ու ստրուկ ժողովուրդներու իրենց ազատությանը ստացնելով՝ կը քաշվի կառանձնանա իր տունը, ուրկե ելած էր միայն ի վերուստ իրեն հանձնյալ պաշտոնը կատարելու ամենայն հավատարմությամբ»։

Կարիպալտի իտալիան ազատեց.

Կարիպալտի փոխարինություն մը չ'ընդունեց։

Ահա այս երկու հատկություններն են, որ Աշխարհիս սերն անոր վրա քաշեցին և այսօր առ հասարակ ամեն մարդ ավելի ակնածությամբ անոր անունն ՚ի բերան կ'առնէ քան թե Աշխարհիս էն մեծ կայսերաց անունը։

Տա՛ր երկինք, որ ամեն ընկճյալ աղգերու համար ալ այսպիսի անձինք հառնեն և աշխարհիս խաղաղությունը հաստատ հիմանց վրա դրվեր»³⁴։ Այս հոդվածը «Մեղունում» տպագրվեց 1860 թ. նոյեմբերի 20-ին, այսինքն այն օրը, երբ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը Հնդկաստան ուղեվորվելիս ճանապարհին ժամանեց Կ. Պոլիս և այնտեղ մնաց մեկ ամիս։

«Մեղուի» 1861 թ. դեկտեմբերի 20-ի համարում Սրվաճյանը տպագրում է Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջիկ» բանաստեղծությունը։

32 Նույն տեղում, էջ 86։

33 Տե՛ս Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1940, էջ 438—440։

34 «Մեղու», Կ. Պոլիս, 20 նոյեմբերի 1860։

Պալերմոյի համալսարանի ուսանողներին ուղղված նամակում³⁵ Զ. Գարիբալդին այլաբանորեն նկարագրում է իտալական ազգի անհամերաշխ «մկներին», որոնք, ստանձնելով հասարակական գործերի ղեկը, «լիրք և շահամոլ ծնունդներ» են և այդ կարևոր գործը «կը տանին ժալոերու վրա կը ձգեն»: «Զեզի կի՛յնա, ո՛վ ազգին ընտիր մասը, ձեռի կի՛յնա ոչ միայն ժողովուրդին առաջնորդել... այլ և զանի կրթել, ձեր խորհուրդներով զգուշացնել, որպեսզի նորեն մկները զինքը չմոլորեցնեն», — ասված է նամակում: Զուգեպպե Գարիբալդին պատանիներին զգուշացնում էր, որ այլևս «մկները» չորանց սխալ ուղու վրա չկանգնեցնեն: Լեյդ նրանք են, որոնք աշխատում են վերադառնալ հին, իրենց ձեացնելով «ժողովրդական իրավանցը սուտ պաշտպաններ»³⁶: Հետաքրքրական է, որ Հ. Սրվաճյանի աշխարհայացքի ձևավորման վրա անմիջական ազդեցություն է ունեցել իտալական ազգային-ազատագրական շարժումը:

Հ. Սրվաճյանի ջանքերի շնորհիվ նրա պարբերականի շուրջն էին համախմբվել արևմտահայ դեմոկրատներ Ս. Թադվորյանը, Մ. Մամուրյանը, Ստ. Ոսկանը, Գր. Զիլինկիրյանը, Կար. Փանոսյանը, Արմ. Հայկունին, Հ. Քյաթիպյանը և ուրիշներ: Նկատենք, որ Սրվաճյանի «Մեղուն» Մ. Նալբանդյանի իտալական լեմաներով գրված գործերը հիմնականում արտատպում էր «Հյուսիսափայլից»:

Զուգեպպե Գարիբալդիի «հաղարյակի» առաջարժուժով հիացած էին աշխարհի առաջադեմ գործիչները, դրանց թվում և մեծ հումանիստ գրող Վիկտոր Հյուգոն: Նա շատ բարձր էր գնահատում Գարիբալդիի տաղանդը այդ գործում, նրա փառապանծ «հաղարյակի» արշավանքը համեմատում էր հին աշխարհի մեծագույն սխրագործություններից մեկի՝ հույն նշանավոր զորավար Քսենոփոնի նահանջի հետ³⁷:

Դեմոկրատ Գրիգոր Զիլինկիրյանը, համակրելով իտալական դեպքերին, բնագրից լրագրմաննց Վիկտոր Հյուգոյի երկու նամակը ուղղված Գարիբալդին և նրա պատասխանը մեծ գրողին ու տպագրեց «Ծաղիկ» հանդեսում³⁸:

Հյուգոն այս նամակներում կոչ էր անում մարդկությանը «օգնելու Գարիբալդիի սուրբ գործին», այն գործին, որի համար պայքարում էր «իդեալի հերոսը»՝ Գարիբալդին:

Հայ պարբերական մամուլում տպագրվել են նաև Գարիբալդիի նամակներն ուղղված իր մարտական ընկերներին՝ դինվորներին և ժողովրդին: Լեյդպիսի նամակներ հրապարակվել են «Լեռնաբլուրում», «Մեղու Հայաստանիում», «Մասյաց աղավնիում», «Մշակում» և այլուր: Դրանցում արտահայտված են Գարիբալդիի ջերմ հայրենասիրությունը, նրա ազատասիրական գաղափարները, ժողովրդասիրությունը: Միաժամանակ այդ նամակները բացահայտում են Գարիբալդիի զորավարական տաղանդը, ինչպես և նրա քաղաքական-հասարակական գործունեության թույլ կողմերը:

1867-ին «Հայկական աշխարհում» տպագրվել է ռուս նշանավոր հեղափոխական-դեմոկրատ Ն. Ա. Դոբրոլյուբովի «Հայր Ա. Գավառցին և նորա քա-

³⁵ Նույն տեղում, 20 մարտի 1862:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Տե՛ս Виктор Гюго, Собрание сочинений в 15 томах, т. 14, М., 1956, էջ 631:

³⁸ Տե՛ս «Ծաղիկ», հանդես տասնօրյա, Զմյուռնիա, 1864, №№ 82 և 83:

րողները» հրապարակախոսությունը (Փիլիպոս Վարդանյանի թարգմանությունով, մեկնաբանություններով և ծանոթագրություններով)³⁹, որտեղից երևում է ռուս հեղափոխական-դեմոկրատի համակրանքը դեպի իտալական ազգային-ազատագրական շարժումներն ու Գարիբալդիի գինակից հայր Գավազցին, ինչպես և հակակրանքը լիբերալ բուրժուական թևի նշանավոր ներկայացուցիչ Կավուրի նկատմամբ։ Այն մեկ անգամ ևս հայ ընթերցողին ծանոթացնում էր ռուս հեղափոխական-դեմոկրատի մտքերին, իտալական ժողովրդի մղած հերոսական պայքարին, Գարիբալդիի բանակում կռվող հայր Գավազցին ու նրա հեղափոխական գործունեությանը։ Գավազցիի ճառերում առաջ էին քաշվում մի շարք հրատապ խնդիրներ. պայքար հոգևորականության անօրինությունների դեմ, ազդի միաբանության և ազատության գաղափարներ, հեղափոխական ճանապարհով Խալիպայի ազատագրում ու միավորում և այլն, հարցեր, որ նույն ժամանակաշրջանում հուզում էին հայ ժողովրդին։ Պատահական չէ, որ այդ նյութը գրավել է Փ. Վարդանյանի ուշագրությունը և նա ցանկացել է Դոբրոլյուբովի այս գործը ներկայացնել հայ ընթերցողներին։

«Արևելյան մամուլում» տպագրվել է իր կյանքի վերջին տարիներին Մաձձինիի գրած հոդվածաշարը՝ «Պ. Ռենան և Ֆրանսիա» վերնագրով⁴⁰։ Այստեղ Մաձձինին քննարկում է Ռենանի հայացքները։ Ռենանը պաշտպանում էր միապետությունը Ֆրանսիայում։ Մաձձինին հակադրվում է նրան իր հանրապետական գաղափարներով։ Նա Ֆրանսիայի զարգացման միակ «ուղիղ ճամբեն» համարում է հանրապետությունը։ Սա ժամանակի տեսանկյունից բավականին առաջադիմակա էր։ «Արևելյան մամուլի» խմբագրին՝ Մ. Մամուրյանին ընդհանրապես հետաքրքրել են Մաձձինիի հայացքները։ Մաձձինին և Գարիբալդին մնում էին հանրապետականներ։ Ավելի ուշ Մաձձինին իր հայացքներում տատանումներ ունեցավ, նա զնաց Բակունինի անարխիստական ուղիով⁴¹։ Իսկ Գարիբալդին կյանքի վերջին հասկացավ Մարքսի և էնգելսի հիմնադրած առաջին ինտերնացիոնալի դերը միջազգային բանվոր դասակարգի համախմբման և համագործակցության գործում։

Հայ պարբերական մամուլը հատկապես լայնորեն արձագանքեց իտալական ազգային-ազատագրական շարժումներին 1882 թ.՝ Գարիբալդիի մահվան, ինչպես և 1907 թ.՝ նրա ծննդյան 100-ամյակի առիթով։ Այս անգամ ևս հայ հեղինակները դրվատանքի խոսքեր ասացին Գարիբալդիի և նրա գործի մասին։

«Խտալական ազատագրական շարժումները և հայերը» հոդվածում Ա. Բաբայանը ձիշտ է նկատել, որ իտալացիների ճակատագրի մեջ հայերը տեսնում էին իրենց սեփական ճակատագիրը⁴²։ Նրկու ժողովուրդների կյանքի ընդհանրությունը նշել է իտալական Ռիսորջիմենտոյի շարժման ականավոր գործիչ, նշանավոր դանտեագետ, «Աստվածային կատակերգության» լավագույն մեկնարանողներից Նիկոլո Թոմազեոն, որը Ազաթանգեղոսի «Հայոց պատմու-

39 Տե՛ս «Հայկական աշխարհ», գրական և մանկավարժական օրագիր, 1867, №№ 4—8։

40 «Արևելյան մամուլ», հանդես ամսյա, Զմյուռնիա, 1874, մարտ, ապրիլ և մայիս ամիսներ։

41 Տե՛ս Н. Ю. Колпинский, Маркс и Энгельс о Мадзини, «История социалистических учений», М., 1976, էջ 36։

42 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3։

թիւան» իտալերեն թարգմանության (1843 թ.) առաջաբանում գրել է. «Մեր երկու ազգերը, որոնք երբեմն տիրողներ էին, հետագայում տիրվեցին և բաժան-բաժան եղան: Նրանք մի որոշ ժամանակ կորցրին նույնիսկ իրենց լեզվի անաղարտութիւնը, և այժմ տանջալի սիրով նորից ձեռք են բերում այն: Նրանի թե Հայաստանի հրն հիշատակարանների այս թարգմանութիւնները սիրո կապ հաստատեն իրարից հեռու, բայց հավատով ու վշտով համանման բույր ժողովուրդների միջև»⁴³: Ա. Բաբայանի հոգվածում ցույց են տրված այն առնչութիւնները և ազդեցութիւնները, որ ուղղակիորեն գոյութիւն ունեն իտալական և հայ գրականութիւնների միջև: Հեղինակն իրավացիորեն զրտնում է. որ ոչ միայն իտալական Ռիսորջիմենտոյի գրականութիւնն է ազդել հայ գրականութիւն վրա, այլև իտալական ազգային-ազատագրական շարժումներն են արձագանք գտել հայ իրականութիւն մեջ:

ОТРАЖЕНИЕ ИТАЛЬЯНСКОГО НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ В АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

(1850--1870 гг.)

Г. А. АСМАРЯН

(Резюме)

Национально-освободительные движения в Италии были направлены против иноземного господства и имели целью воссоединение раздробленной страны. В сходном положении находилась Армения, западная часть которой стояла под турецким игом. Поэтому неслучайно, что армянская периодическая печать того времени («Юсисапайл», «Мегу», «Аревелян мамул», «Цагик», «Мегу Айастани», «Мшак», «Аршалуйс Араратян», «Ехбайрасер», «Базмавеп», «Юсис» и др.) постоянно уделяла внимание событиям в Италии, в частности героической деятельности Гарибальди, Мадзини и др., пытаясь на их примере воодушевить свой народ и пробудить в нем дух свободолюбия. В статье оцениваются различные точки зрения армянской общественно-политической мысли на итальянские национально-освободительные движения.

⁴³ Նույն տեղում, էջ 189—190: